

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ կողմից կազմակերպված <<Մեկ գյուղ, մեկ արտադրանք>> մեկնարկային միջոցառմանը

15.05.2013



2013 թվականի մայիսի 14-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը մասնակցել է Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի կողմից կազմակերպված <<Մեկ գյուղ, մեկ արտադրանք>> մեկնարկային միջոցառմանը: Միջոցառման մասնակիցներին ողջունել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կարինե Մինասյանը և Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ գործադիր տնօրեն Վարազդատ Կարապետյանը: OVOP ճապոնական փորձը ներայացրել է Ակիհիրո Ցուկամոտոն (Գլխավոր խորհրդատու, ՃՄՀԳ): Իսկ հայկական OVOP նախնական հայեցակարգը և ծրագրի աշխատանքային պլանը ներայացրել է ծրագրի օգնական Գառնիկ Մանուկյանը: Վերջում եզրափակիչ խոսքով հանդես է եկել Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ գործադիր տնօրեն Վարազդատ Կարապետյանը: